Միավորված ազգերի կազմակերպություն E/CN.6/2015/L.1*

Տնտեսական եւ սոցիալական խորհուրդ[1]

Տարածումը. սահմանափակ
5-ը մարտի, 2015 թ.
Բնօրինակը. անգլերեն

Կանանց դրության հարցերով հանձնաժողով
Հիսունիներորդ նստաշրջան
Մարտի 9-20, 2015 թ.
Նախնական օրակարգի Կետ 3**
Ի լրումն Կանանց հարցերով չորրորդ համաշխարհային խորհրդաժողովի եւ Ընդհանուր վեհաժողովի «Կանայք 2000. գենդերային հավասարություն, զարգացում եւ խաղաղություն քսանմեկերորդ դարում» խորագրով քսաներեքերորդ հատուկ նստաշրջանի

Բանաձեւի նախագիծ՝ ներկայացված Կանանց դրության հարցերով հանձնաժողովի նախագահի կողմից, ոչ պաշտոնական խորհրդակցությունների արդյունքում

Քաղաքական հռչակագիր Կանանց հարցերով համաշխարհային չորրորդ խորհրդաժողովի քսանամյա հոբելյանի կապակցությամբ

Կանանց դրության հարցերով հանձնաժողովը

Ընդունում է սույն բանաձեւի հավելված քաղաքական հռչակագիրը

* Տեխնիկական պատճառներով վերաթողարկվել է 2015 թ. մարտի 9-ին:
* E/CN.6/2015/1.

[1] Թարգմանությունը՝ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի

Հավելված

Քաղաքական հռչակագիր Կանանց հարցերով համաշխարհային չորրորդ խորհրդաժողովի քսանամյա հոբելյանի կապակցությամբ

Մենք՝ նախարարներ ու կառավարությունների ներկայացուցիչներ,

Հավաքվելով Նյու Յորքում, Կանանց դրության հարցերով հանձնաժողովի 59-րդ նստաշրջանի շրջանակներում, 1995 թվականին Պեկինում կայացած Կանանց հարցերով համաշխարհային չորրորդ խորհրդաժողովի քսաներորդ հոբելյանի կապակցությամբ, որպեսզի նախաձեռնենք Պեկինի հռչակագրի եւ Գործողությունների ծրագրի, ինչպես նաեւ Ընդհանուր վեհաժողովի՝ «Կանայք 2000. գենդերային հավասարություն, զարգացում եւ խաղաղություն քսանմեկերորդ դարում» խորագրով քսաներեքերորդ հատուկ նստաշրջանի արդյունքում ընդունված փաստաթղթերի իրականացման դիտարկումը եւ գնահատումը, ներառյալ ընթացիկ մարտահրավերները, որոնք ազդում են Գործողությունների ծրագրի իրականացման եւ կանանց ու աղջիկների կողմից մարդու բոլոր իրավունքների եւ հիմնարար ազատությունների լիարժեք եւ հավասար կենսագործման, գենդերային հավասարության հասնելու եւ իրենց կյանքի ողջ ընթացքում կանանց եւ աղջիկների հնարավորությունների ընդլայնման վրա, եւ որպեսզի ապահովենք Գործողությունների ծրագրի իրականացման արագացումը եւ օգտագործենք «Հետ-2015» զարգացման օրակարգի ընձեռած հնարավորությունները՝ գենդերային հեռանկարը կայուն զարգացման տնտեսական, սոցիալական եւ բնապահպանական հատույթներում ներգծելու նպատակով, եւ հանձնառություն ստանձնելով ապահովենք, որ գենդերային մոտեցումը ներառվի զարգացման, տնտեսական, սոցիալական, բնապահպանական, մարդասիրական եւ հարակից ոլորտներում Միավորված ազգերի կազմակերպության բոլոր խոշոր համաժողովների եւ գագաթաժողովների նախապատրաստական, միասնական եւ համակարգված իրագործման եւ հետամուտ լինելու աշխատանքներում, որպեսզի դրանք արդյունավետորեն նպաստեն գենդերային հավասարության կենսագործմանը եւ կանանց ու աղջիկների հնարավորությունների ընդլայնմանը:

1. *Վերահաստատում ենք* Պեկինի հռչակագիրը[2] եւ Գործողությունների ծրագիրը[3], Ընդհանուր վեհաժողովի քսաներեքերորդ հատուկ նստաշրջանի արդյունքում ընդունված փաստաթղթերը եւ Կանանց հարցերով համաշխարհային չորրորդ խորհրդաժողովի տասնամյակի եւ տասնհինգամյակի կապակցությամբ Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի ընդունած հռչակագրերը:[4]

2. *Ընդունում ենք*, որ Պեկինի հռչակագրի եւ Գործողությունների ծրագրի իրականացումը, ինչպես նաեւ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» կոնվենցիայի[5] ներքո պարտավորությունների իրագործումը փոխլրացնող դեր ունեն գենդերային հավասարության, կանանց եւ աղջիկների հնարավորությունների ընդլայնման եւ նրանց իրավունքների իրացման

---

[2] *Կանանց հարցերով համաշխարհային չորրորդ խորհրդաժողովի զեկույց, Պեկին , 1995 թ. սեպտեմբերի 4-15* (ՄԱԿ-ի հրատարակություն, Վաճառքի համար՝ E.96.IV.13), Գլուխ. I, բանաձեւ 1, հավելվածներ I եւ II:

[3] Ընդհանուր վեհաժողովի բանաձեւ թիվ S-23/2, հավելված, եւ բանաձեւ թիվ S-23/3, հավելված:

[4] Տե՛ս *Տնտեսական եւ սոցիալական խորհրդի պաշտոնական արձանագրություններ, 2005 թ., Լրացում թիվ 7* եւ լրամշակումներ (E/2005/27 եւ Լրամշ. 1), Գլուխ I, բաժին A, եւ Տնտեսական եւ սոցիալական խորհրդի որոշում թիվ 2005/232: Տե՛ս նաեւ *Տնտեսական եւ սոցիալական խորհրդի պաշտոնական արձանագրություններ, 2010 թ., Լրացում թիվ 7* եւ լրամշակումներ (E/2010/27 եւ Լրամշ. 1), Գլուխ I, բաժին A, եւ Տնտեսական եւ սոցիալական խորհրդի որոշում թիվ 2010/232:

[5] Միավորված ազգերի կազմակերպություն, *Պայմանագրերի շարք [Treaty Series]*, հատոր 1249, թիվ 20378:

տեսանկյունից, եւ կոչ ենք անում դեռեւս չմիացած պետություններին, որոնք քննության առնեն Կոնվենցիան եւ դրա Կամընտիր արձանագրությունը[6] վավերացնելու կամ դրանց միանալու հարցը:

3. *Ողջունում ենք* Պեկինի հռչակագրի եւ Գործողությունների ծրագրի լիարժեք իրականացման ուղղությամբ ազգային, տարածաշրջանային եւ համաշխարհային մակարդակներում քաղաքականությունների ձեւավորման եւ իրականացման համաձայնեցված գործողությունների միջոցով արձանագրված առաջընթացը, ինչպես նաեւ ողջունում ենք կառավարությունների ձեռնարկած վերանայման գործողությունները Կանանց հարցերով համաշխարհային չորրորդ խորհրդաժողովի քսանամյա հոբելյանի համատեքստում՝ արձանագրելով բոլոր առնչվող շահագրգիռ կողմերի բերած նպաստը եւ վերանայման արդյունքները, եւ սպասում ենք գենդերային հավասարության ու կանանց հնարավորությունների ընդլայնման թեմայով համաշխարհային առաջնորդների հանդիպմանը, որը տեղի կունենա 2015 թ. սեպտեմբերի 26-ին:

4. *Մտահոգություն ենք հայտնում*, որ առաջընթացը եղել է դանդաղ ու անհամաչափ, եւ որ խոշոր բացերը դեռեւս առկա են, եւ որ խոչընդոտները, ներառյալ, այլոց թվում, կառուցվածքային արգելքները, շարունակում են խանգարել Գործողությունների ծրագրի մտահոգության առարկա հանդիսացող 12 կարեւորագույն ոլորտներում, եւ ընդունում, որ Կանանց հարցերով համաշխարհային չորրորդ խորհրդաժողովից 20 տարի անց ոչ մի երկիր լիարժեքորեն չի հասել կանանց եւ աղջիկների համար հավասարության եւ հնարավորությունների ընդլայնման, որ գլոբալ մակարդակով դեռեւս գոյություն ունեն հսկայական աստիճանի անհավասարություններ կանանց եւ տղամարդկանց, աղջիկների եւ տղաների միջեւ, եւ որ բազմաթիվ կանայք ու աղջիկներ ենթարկվում են խտրականության, խոցելիության եւ մեկուսացման բազմակի եւ տրամախաչվող ձեւերի՝ իրենց ամբողջ կյանքի ընթացքում:

5. *Գիտակցում ենք*, որ նոր մարտահրավերներ են ի հայտ եկել, եւ վերահաստատում ենք մեր քաղաքական կամքը եւ հաստատակամորեն հանձն առնում դիմակայել մարտահրավերներին եւ լրացնել մտահոգության առարկա հանդիսացող 12 կարեւորագույն ոլորտներում իրականացման դեռեւս առկա բացերը, մասնավորապես՝ կանայք եւ աղքատությունը, կանանց կրթությունը եւ վերապատրաստումը, կանայք եւ առողջությունը, կանանց նկատմամբ բռնությունը, կանայք եւ զինված հակամարտությունները, կանայք եւ տնտեսությունը, կանայք իշխանության եւ որոշումների կայացման մեջ, կանանց առաջխաղացման կառուցակարգային մեխանիզմները, կանանց իրավունքները, կանայք եւ լրատվամիջոցները, կանայք եւ շրջակա միջավայրը, աղջիկ երեխան:

6. *Խոստանում ենք* հետագա կոնկրետ քայլեր ձեռնարկել՝ ապահովելու Պեկինի հռչակագրի ու Գործողությունների ծրագրի եւ Ընդհանուր վեհաժողովի քսաներեքերորդ հատուկ նստաշրջանի արդյունքում ընդունված փաստաթղթերի լիարժեք, արդյունավետ ու արագացված իրականացումը, ներառյալ՝ օրենքների, քաղաքականությունների, ռազմավարությունների եւ ծրագրային գործողությունների բարելավված իրականացման միջոցով՝ ուղղված բոլոր կանանց եւ աղջիկներին, բոլոր մակարդակներում գենդերային հավասարության եւ կանանց ու աղջիկների հնարավորությունների ընդլայնման նպատակով կառուցակարգային մեխանիզմների ստեղծման համար բարելավված եւ ընդլայնված աջակցության միջոցով, խտրական նորմերի ու գենդերային կարծրատիպերի ձեւափոխման եւ այնպիսի սոցիալական նորմերի եւ աշխատաեղանակների խթանման միջոցով, որոնք ճանաչում են կանանց դրական դերը եւ բերած նպաստը եւ վերացնում են կանանց եւ աղջիկների նկատմամբ խտրականությունը, ռեսուրսային բացերը լրացնելու նպատակով ներդրումների զգալի մեծացման միջոցով, ներառյալ՝ բոլոր աղբյուրներից ֆինանսական միջոցների մեկտեղման ճանապարհով, այդ թվում՝ ռեսուրսների հայթայթում եւ բաշխում տեղական մակարդակում, զարգացմանն ուղղվող պաշտոնական օժանդակության կառուցվածքում գենդերային հավասարությանը եւ կանանց հնարավորությունների ընդլայնմանը տրվող առաջնահերթության

[6] Նույն տեղում, հատոր 2131, թիվ 20378:

բարձրացման միջոցով՝ ձեռքբերված առաջընթացը զարգացնելու նպատակով, եւ որպեսզի ապահովվի, որ զարգացմանն ուղղվող պաշտոնական օժանդակությունն արդյունավետորեն օգտագործվում է Գործողությունների ծրագրի իրականացմանը նպաստելու համար, առկա հանձնառությունների կատարման նպատակով հաշվետվականության բարելավման միջոցով, ինչպես նաեւ ընդլայնված կարողությունների ստեղծման, տվյալների հավաքման, մշտադիտարկման եւ գնահատման, տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների հասանելիության եւ դրանց օգտագործման միջոցով:

7. *Ընդգծում ենք*, որ Պեկինի հռչակագրի եւ Գործողությունների ծրագրի լիարժեք ու արդյունավետ իրագործումը էական նշանակություն ունի Հազարամյակի զարգացման նպատակների չավարտված մասին հասնելու եւ մնացած վճռորոշ մարտահրավերներին դիմագրավելու հարցում՝ «Հետ-2015» զարգացման օրակարգի շրջանակում փոխակերպող եւ համապարփակ մոտեցման միջոցով, ներառյալ՝ գենդերային հավասարության եւ բոլոր կանանց ու աղջիկների հնարավորությունների ընդլայնման հասնելու կայուն զարգացման նպատակի միջոցով, ինչպես իր զեկույցում առաջարկել է Կայուն զարգացման նպատակների հարցով բաց աշխատանքային խումբը,[7] որը լինելու է կայուն զարգացման նպատակները «Հետ-2015» զարգացման օրակարգում ներգծելու գլխավոր հիմքը, միեւնույն ժամանակ ընդունելով, որ Ընդհանուր վեհաժողովի վաթսունհիներորդ նստաշրջանի[8] ընթացքում միջկառավարական բանակցությունների գործընթացում հաշվի կառնվեն նաեւ այլ ներդրումներ, ինչպես նաեւ՝ «Հետ-2015» զարգացման օրակարգում գենդերային մոտեցման ներգծման միջոցով:

8. *Վերահաստատում ենք* Կանանց դրության հարցերով հանձնաժողովի առաջնային պատասխանատվությունը Կանանց հարցերով համաշխարհային չորրորդ խորհրդաժողովին հաջորդող քայլերի եւ Ընդհանուր վեհաժողովի քսաներեքերորդ հատուկ նստաշրջանի արդյունքում ընդունված փաստաթղթերին հետամուտ լինելու հարցում, եւ հիշատակում ենք այս առումով Հանձնաժողովի կողմից նախկինում արված աշխատանքը, եւ նաեւ վերահաստատում ենք Հանձնաժողովի խթանիչ դերը գենդերային հավասարությունը եւ կանանց հնարավորությունների ընդլայնումը խթանելու գործում՝ հիմնվելով Պեկինի հռչակագրի եւ Գործողությունների ծրագրի եւ քսաներեքերորդ հատուկ նստաշրջանի արդյունքում ընդունված փաստաթղթերի լիարժեք կենսագործման վրա, ինչպես նաեւ վերահաստատում ենք Հանձնաժողովի դերը Միավորված ազգերի կազմակերպության համակարգի ներսում գենդերային մոտեցման ներառումը խթանելու եւ այն մշտադիտարկման ենթարկելու գործում:

9. *Ճանաչում ենք* Միավորված ազգերի կազմակերպության՝ Գենդերային հավասարության եւ կանանց հնարավորությունների ընդլայնման հարցերով կառույցի (ՄԱԿ-Կանայք) կարեւոր դերը գենդերային հավասարության ու կանանց հնարավորությունների ընդլայնման առաջմղման հարցում եւ այն առանցքային դերը, որ կառույցն ունի անդամ պետություններին աջակցելու, Միավորված ազգերի կազմակերպության կառույցների համակարգման, ինչպես նաեւ քաղաքացիական հասարակությանը, մասնավոր հատվածը եւ բոլոր մակարդակներում այլ շահագրգիռ կողմերին համախմբելու հարցում՝ Պեկինի հռչակագրի եւ Գործողությունների ծրագրի իրականացման դիտարկմանն ու գնահատմանն օժանդակելու նպատակով, եւ *կոչ ենք անում* «ՄԱԿ-Կանայք» կառույցին եւ Միավորված ազգերի կազմակերպության համակարգին՝ շարունակել աջակցությունը Պեկինի հռչակագրի եւ Գործողությունների ծրագրի ամբողջական, արդյունավետ եւ արագացված իրականացմանը եւ վերանայմանն ու գնահատմանը միջազգային, տարածաշրջանային, ազգային եւ տեղական մակարդակներում, այդ թվում՝ գենդերային մոտեցման համակարգված ներգծման, արդյունքների ապահովման համար ռեսուրսների մոբիլիզացման եւ տվյալների ու հաշվետվականության գործուն համակարգերի օգնությամբ առաջընթացի մշտադիտարկման միջոցով:

---

[7] Տե՛ս A/68/970 եւ Լրամշ. 1:

[8] Տե՛ս Ընդհանուր վեհաժողովի թիվ 68/309 բանաձեւը:

10. *Ողջունում ենք* քաղաքացիական հասարակության, այդ թվում՝ ոչ կառավարական կազմակերպությունների, կանանց եւ համայնքահեն կազմակերպությունների ներդրումները Գործողությունների ծրագրի իրականացման գործում եւ պատրաստակամություն ենք հայտնում տեղական, ազգային, տարածաշրջանային եւ համաշխարհային մակարդակներում շարունակել աջակցությունը քաղաքացիական հասարակությանը, որը ներգրավված է գենդերային հավասարության եւ կանանց ու աղջիկների հնարավորությունների ընդլայնման առաջմղման եւ խթանման աշխատանքներում, ներառյալ՝ քաղաքացիական հասարակության համար ապահով եւ նպաստավոր միջավայրի ձեւավորման միջոցով:

11. *Ճանաչում ենք* գենդերային հավասարության եւ կանանց ու աղջիկների հնարավորությունների ընդլայնման հասնելու հարցում տղամարդկանց եւ տղաների լիարժեք ներգրավման կարեւորությունը, եւ հանձն ենք առնում ձեռնարկել միջոցներ՝ Պեկինի հռչակագրի եւ Գործողությունների ծրագրի ամբողջական, արդյունավետ եւ արագացված իրականացմանը հասնելուն ուղղված ջանքերում տղամարդկանց եւ տղաների լիարժեք ներգրավման նպատակով:

12. *Պատրաստակամություն ենք հայտնում* գենդերային հավասարության եւ կանանց ու աղջիկների հնարավորությունների ընդլայնման հասնելու գործում ներգրավել շահագրգիռ բոլոր կողմերին եւ կոչ ենք անում նրանց՝ ակտիվացնել ջանքերն այս ուղղությամբ:

13. Մենք *նաեւ հանձն ենք առնում* 2015 թվականի ընթացքում եւ դրանից հետո օգտագործել բոլոր հնարավորությունները եւ գործընթացները՝ արագացնելու եւ հասնելու Պեկինի հռչակագրի եւ Գործողությունների ծրագրի ամբողջական եւ արդյունավետ իրականացմանը, որպեսզի վերանայման յուրաքանչյուր շրջափուլում հնարավոր լինի հասնել կոնկրետ արդյունքների, եւ վճռականություն ենք հայտնում ձգտելու մինչեւ 2030 թվականը հասնելու գենդերային հավասարության եւ կանանց հնարավորությունների ընդլայնման լիակատար կենսագործման: